

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պոլիարիոյ համար  
 Տարեկան 10 Ֆր.  
 Վեցամսեայ 5 »  
 Արասահմանի համար  
 Տարեկան 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 2.50 Տր.  
 Վեցամսեայ 1.25 »  
 ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ  
 Իսկուցման տղոց առաջին երեսին համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ կ. երեքին աւելի անգամներու համար 20 Օլո գեղջ կըրոյս :

# ՇԱՐՋՈՒՄ

Նամակ և դրամ դրկնի  
 Խմբագրութեան հասցիին  
 —  
 Редакция на ввстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Գրութիւնք ևս չեն տրուիր

(Գին 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(Գին 10 ՍԱՆԹԻՄ)

«ՇԱՐՋՈՒՄ»Ի 1900Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փետրուար 1ին կսկսի «Շարժում»ի երրորդ տարեշրջանը հետեւեալ պայմաններով .  
 Պոլիարիոյ համար տարեկան 12 Ֆր.  
 » » վեցամսեայ 6 »  
 Արասահմանի համար տարեկան 15 »  
 » » վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար տարեկան 3 տոլար  
 » » վեցամսեայ 1.50 »  
 Պոլիարիոյ համար ձեռքի 15 սանթիմ  
 Արասահմանի » » 20 »

Բաժնեգրիւնները կանխիկ են :  
 Ամէն բաժանորդ իր հասցէին հետ մէկտեղ պէտք է բաժնեգրինը զրկէ . այս թէ ոչ «Շարժում» չի զրկուի :  
 Մեր գործակալներէն կը խնդրուի հաղորդել մեզ՝ չը վճարող բաժանորդներուն անունները, որպէս զի այդ մարդոց թերթերը դադարեցնենք :

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԿՆԵՐՈՒՆ

«Շարժում»ի երկրորդ տարեշրջանը աւարտելուն մէկ ամիս մնաց . մեր այն ամէն բաժանորդները որոնք մինչեւ հիմա չեն վճարած, թող բարեհաճին զըրկել իրենց բաժնեգրիւնները :  
 Փետրուարի 1ին պիտի սկսի երրորդ տարեշրջանը . նախորդ տարուան պարտքերը չը վճարողին «Շարժում» չը պիտի զրկուի : Փետրուարին պիտի յայտարարուին նաեւ բոլոր այն բաժանորդներու և գործակալներու անունները, որոնք խնդր ունին հայ թերթի մը վարձքը ուտելու :

Ս. Ա. Աբիշահան սգակիր ընտանիքը հրապարակաւ իր շնորհակալութիւնը կը յայտնէ այն ամէն անձնաւորութեանց, որք հաճեցան իրենց ցաւակցութիւնը յայտնել, և 1900 Յունվար 7ին ներկայ լինել յուզարկաւորութեան հանդիսին .

Տ. ՍԱՐԳՍԻ Ա. ԱՐԻՇԵԱՆԻ  
 որ 76 տարեկան կնքեց իր մահկանացուն, ի խոր սուգ թողով իր բոլոր ընտանիքը և ազգակիցները :  
 Իրաւունք թերթին ալ տուած էինք սոյն շնորհակալութիւնը . բայց Սարգիս Ա. Աբիշահանի սուգ՝ Սարգիս Ա. Աբիշահանի գրած էին, ուստի թիւ 3 Իրաւունքի մէջ եղած շնորհակալութիւն ալ մեր կողմէ եղած է :  
 Վառնա, 18 Յունվար 1900

ՄԵՐ ՍՈՓԵԱՏՆԵՐԸ

Հայերիս մէջ սոփեստներ շատ կան : Եւ այդ բնական է . որովհետեւ մեր լուստեր համարված դասակարգի մեծամասնութիւնը արտաքուստ է միայն լուստերով . հանրամարդկային մտքերի գաղափարական և յառաջդիմական տարրերը, հիմնական և ընկերական լայն սկզբունքները, հասարակութեան օգտին ծառայող իդէալները միշտ հեռու են մնացել մեր կեղծ լուստերովածներէ և դրա համար այդ դասակարգը արտադրել է և շարունակում է արտադրել ծակ փիլիսոփաներ, սոփեստներ՝ որոնք ամեն մի յիմարութիւն և ամեն մի անպատարբը գործ ու քայլ պաշտպանում են նոյն եռանդով և ճարտարութեամբ ինչպէս և ամեն մի աղնիւ ու վեհ գործ :

Այդ սոփեստները լուստերովել են միայն այն շարժում, որչափ կը բաւականանար անձնական հաշիւը շտկելու, մի գիրք ստեղծելու, ամբողջ աշխարհ թող փչելու և խելացիի հոգակից աման կերպով ստանալու համար :

Շատ են այս սոփեստները . մեծ և խոշոր, բոլորովին տխմար և ընդունակ . միշտ եւրոպական մեծ ու պղտիկ հանճարներով, ինչպէս և փողոցային հեղինակներով անունները բերաններում, նրանցից մի քանի ճշտուն նախագաւթութիւններ սերտած, առանց մտքերը ըմբռնելու, և բեռում են, տնային յարկերի տակ, գրական և այլ ասպարէզներում . քննադատում, վարդում և փշրում են աջ ու ձախ, ամեն գործ և դադար, նայելով հանգամանքին և վայրկեանին լաւ թէ վատ : Եւ որքան ճարպիկ են դրանք, որքան այն պէս դիմակներ են հագնոււմ, ու երբեմն փիլիսոփայական լրջութեամբ, երբեմն էլ բանաստեղծօրէն այնպիսի սուտ, կեղծ և վատ գործեր են պաշտպանում, և ամբնաանբարոյական մի կարծիք այնպիսի անպատկառ սուտ անկեղծութեան շեշտով արտայայտում որ, միամիտ լսողը և

տեսնողը կարծում է թէ դրանք իմաստութեան աղբիւրը ամբողջովին ծծել ու քամել են, իսկ աղնութեան աւազանի մէջ մղըրտվել :

Այս սոփեստները գրելիս իմ աչքի առջեւ պատկերացաւ մի դատարկամիտ, բայց պերճախօս, երբեմն ստորակ, երբեմն անիշխանական, երբեմն անաստուած, երբեմն աստուածավախ, երբեմն աշխարհաքաղաքացի և երբեմն թթու ազգասէր, երբեմն ասպետական զգացմունքներով լի և երբեմն մասնութիւնը թէեւ տխրալի, բայց բնական և ներքին համարող «բանճար» սոփեստ որ մեր բոլոր սոփեստները «ծաղիկ» պէտք է լինի :

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՒՆՅՆՈՒՆ 1 Յունվար

Նիւ-Եօրքի հայ լրագրաց մէջ դեռ նմանը չի տեսնուած վիճարարութիւն մը տեղի կուենայ այս օրեր . մեր ազգային մամուլ մէջ շատ անգամ անտեղի և անձնական կոնքերու այձագանքներն առիթ ունեցած եմ կարգալ, բայց այսօրինակ պղպալի ու ցած վիճարարութիւն մը չէի տեսած որոյ գրիտուր ախտեանն եղած է կիրի Չայն Հայրենաց, որ իր ծնած օրը խոտացաւ անձնական ու պնդատական կոնքերէ հեռի մնալ : Չեր ընթերցողաց ամփոփ գաղափար մը ալ աւելորդ չեմ նկատեր այս կողմի մասին, և կը յուսամ ներողամիտ պիտի ըլլան ինձ եթէ քանի մը խօսք ալ բեմ արդարութիւնը պաշտպանելու համար :

Օրին մէկը մեծախօս ատենարան մը—իր գլխարկի մէջէն—կըսէ իր ունկընդիրներուն թէ ամեր գրականութիւնը ուրիշ ազգաց գրական արեւը եղած է, և կը մտածեմ թէ հանդիսականաց ծափահարութիւնները կընդունի իր այս գրութեան մեծախօսութեան համար : Չոս աւելորդ չէ գրեմ ալ թէ մեր ժողովուրդը վարժուած ըլլալով մեծախօսութեանց՝ կարծես սկսած է սիրել զանոնք, և երբ մէկը յանդգնի դիտողութիւն մը ընել, խաբուսիկ երազներով իրենք զիրենք խաբել ուղղ մարդիկ զայն դատաւիտել կսկսին . չեմ գրեմ թէ ինչո՞ւ խաբուսի կուզենք, ու կը ջանանք կարծել մենք մեզի ինչ որ չենք, և գուցէ սա է մին այն պատ-

ճաններէն որոնք կարգիւն մեզի աշխատիլ ձեռք բերելու այն իրաւունքներն զորս չունինք բայց ունենալ կարծել կը ջանանք :

Դառնանք մեր պատմութեան . յիշեալ ատենախօսի վերջի մեծաբանութիւնը արձագանք կը գտնէ Նիւ-Եօրքի Հայրենիքին մէջ . մէկը կը քննադատէ զայն, և Պ. Չարչաֆճեան կը ձայնակցի քննադատ պարոնին, ու այս միջադէպը պատճառ կը դառնայ ամօթալից կռուին որ կատպէ զիս այս սոփեստները գրել յանուն արդարութեան ու իրաւանց : Պ. Չարչաֆճեանի մի քանի խօսքերը շատ ծանր կուզան Չայն Հայրենացի խմբագիրներուն, անանկ որ քանի մը օր վերջ վ. Շահէնի իր ձայնը կը հանէ Չայնի էջերուն մէջ . երկուր յօդուած մը կը հրատարակէ խորագրէ մինչեւ ստորագրութիւնը . հայհոյութիւններով լեցուն : Այդ յօդուած երկու խօսքով բացատրելու համար սաչափ միայն բաւական է մէջտեղ բերել—հայ գրականութիւնը ուրիշ ազգաց գրականութեան արեւը եղած է, որովհետեւ Պ. Չարչաֆճեան ազգէ է, յիմար է, չար է, հայերէն չը գիտեր, պատմութիւն չը գիտեր եւս, եւ այլն . Շահէնի մի քանի փաստեր ալ մէջ կը բերէ իր յօդուածին մէջ, բայց այդ փաստեր իր հայհոյութեանց մէջ ոչ միայն իրենց արժէքը կը կորսնցունեն, այլ և անբաւական են պայցուցանելու համար թէ իրօք մեր գրականութիւնը ուրիշ ազգաց արեւը եղած է : Իմ կարծեօք այս նիւթ շատ մեծ էր նիւ-Եօրքի մեր թերթիւրուն համար : Չայնի խմբագիրները ամերիկացոց ըսածին պէս «այնպիսի մեծ պատասխան կը խածնեն զորս անկարող են ծամել» : Ինչ որ ալ ըլլար եթէ խընդիրը այսչափով բաւական նկատէին, պիտի ըսէինք թէ այս աշխարհ խմբագիրները իրենց պաշտօնի նախակրթարանին մէջ փորձեր կընեն և սանելու բարի նպատակաւ : Հայրենիք պատասխանեց, զո՞ եմ գիտել թէ հայհոյանքներ կը պակսէին այդ պատասխանի մէջ : Չայնի ձայնաստաները տարբեր «թմբուկ մը կսկսին շալել» : Նիւթը կը փոխուի . Չայն Հայրենացը նոր արեւակ մը կը դառնայ ու անոր բոլորաբար հայհոյութիւնքու ամբաստանութիւնք կսկսին շրջան ընել : Այս մտորակները բաւական լոյս ու սաքեթութիւն տուին նոր արեւակին ու անոր բուն նկարագիրը մասամբ կարողացան պարզել ընթերցողաց աչքին : Վերջերս՝ Դիտող ստորագրութեամբ մէկը կարգ մը նախատինքներ տեղաց Պ. Չարչաֆճեանի դէմ, ջանաց անոր նկարագիրը, անցեալը և բնտանական անունը մրտեղ, և այնչափ հեռուն

գնաց որ համարձակեցաւ ըսել ու փորձել թէ որովհետեւ այս անձի հայրը ժամանակին մահմէտականութիւն ընդունած էր, եւ որովհետեւ անոր հօրեղբայրն ու այս վերջնոյն զաւակը իրենց քրիստոնէութիւնը ուրացած էին, ուստի Չարչաֆեան նկարագրէ զուրկ, անվստահելի եւն. եւն. մէկն էր: Այս հայ գրականութեան արեւ կամ մոլորակ եղած ըլլալու խնդիրը կարծես լուծուած էր, նոր խնդիր մը կը ծնէր անկէ: Ընթերցողք յայտնու չս կրթեցան եւ շատեր շունչիւնին բռնած սկսեցին այս կոտորի վերջաւորութեան սպասել: Շատ մը Տիգրանակերտցիներ կամաւորապէս վկայեցին թէ Պ. Չարչաֆեանի հօրեղբայրը քահանայ մըն էր, որոյ սուկորները կը հանգչին տեղոյն Ս. Կիրակոս եկեղեցւոյ բակին մէջ, եւ թէ Տէր հօր որդին վերջի կոտորածներուն մէջ նահատակ եղած էր՝ իբր հայ եւ քրիստոնեայ: Իսկ Պ. Չարչաֆեան երկար յօդուածով մը իր հօր մասին գրեց այնպիսի ոճով մը որ լռելիայն կը սէր, զաւագին շեշտով մը տակ, թէ հօրս յօրաղջ հաւատափոխութիւնն ինչ յարաբերութիւն ունի մեր վիճարանութեան եւ իմ նկարագրի հետ: Չարչաֆեանի հայրը 1888ին՝ քաղաքական հանգամանքներէ ստիպուած՝ մահմէտականութիւն կընդունի. բայց իր կիներն ու զաւակներն չեն հետեւիր հաւատափոխ հայու ընթացքին. Թովմաս, այն ատեն զեռ 16 տարեկան անփոք պատանի մը, թուրք ամբողջի ձեռքէ ազատելու համար Պօլիս կը զրկուի. հակառակ կեցող. կատարուած թեան կամ բարձրագոյն թուրք հեղինակութեանց բոլոր ջանից ու հրապուրանաց Թովմաս նախապատիւ կը սկսէ իր կրօնին ու ազգութեան փարած մնալ. ամէն ջանք ի գերեւ կելնեն. եւ այս նկարագրէ զուրկ կարծուած պղտիկը հաստատակամութեան եւ լաւագոյն նկարագրի յոյսի նշանները կուտայ. Պատրիարքներ, ինչպէս նաեւ Խրիմեան Հայրիկ, եւ ուրիշ ազգային ծանօթ զէմքեր կը սքանչանան այդ անկեղծ սղուն հաւատարմութեան վրայ. եւ չեմ գիտեր թէ այս անձ անուանարկել փափաքող մեր իմաստակներն, որոնք ժողովուրդի ուսուցիչներ լինելու հովերը կանեն, նոյնիսկ հիմայ, կայսերական շատ մը խոստացեալ շնորհք-

ներու առջեւ պիտի կրնային այնչափ մեծ նկարագրի մը ունենալ որչափ ունեցաւ այդ պատանին իր մանկութեան օրերուն մէջ...  
 Շատ կը կասկածով, բայց անոնց գործած յանցանքով չամբաստանուելու հարկ չեմ սեպել հաւանականութեանց վրայ խօսել եւ անհատի մը նկարագրին վրայ ծանրանալ այսպիսի պարագաներու տակ: Հայր Չարչաֆեան կարելի չէ արդարացունել իր ընթացքին համար. իր զաւակներն անգամ կը դատաւարտեն անոր յախուռն ընթացքը. բայց այսու հանդերձ կարելի չէ վճիռ տրամակել անոր զէմ՝ առանց հայ ամբաստանալը եւ անոր փաստերը լսելու. մարդասպանութիւնն անգամ օրէնքի առջեւ, կրօնքի եւ բազմաթիւ ներքինի է շատ անգամ. մահմէտականութիւնն ընդունող այս մարդը մենք յանցաւոր իսկ նկատելով իրաւունք չունինք անոր զաւակի նկարագրի կասկածի ենթարկել եւ միամիտ ժողովրդի ատելութիւնը գրգռել անոր զէմ՝ «Հայրը թրքացած է» բացառանքով: Իմ նպատակս չէ փաստաբան կանգնել Պ. Չարչաֆեանի, զի նա կարող է իր դատը պաշտպանել, բայց իմ նպատակս է ցոյց տալ ընթերցողաց թէ անձնական ատելութեան մը համար մէկի մը նկարագրի մտաւոր ռեթի է: «Չոր ինչ կամիք զի արասցեն ձեզ մարդիկ, արասցէք եւ դուք նոցա այնպէս»: Չարչաֆեանի մէկ օրիշ յօդուածը կը կարգամ, որոյ մէջ այս «բարոյականը, բարոյականին նշանակութիւնը եւ ուրիշ այս կարգի բարձր խնդիրներ հերկող պարունը ցաւ ի սիրա կը խոստովանի թէ ստիպուած ըլլալով «կոշտ զէնք» գործածեր էր Չարչաֆեանի եւ նմաններու մարմնոյն զէմ՝ անոնց իրատ մը տալու համար: Կը զարմանամ երբ տեսնեմ այսօրինակ աղայութիւններ. Չիթեան ճանձ մը կուլ տուող աղու մը հպարտութեամբ կը կարծէ թէ «կոշտ զէնք» գործածելով կրցած էր առաքելի դեր մը կատարել ազգին պատիւը կամ մամուլը պատիւը փրկելու: Կոշտ մարդիկ միայն կոշտ զէնք կը գործածեն իրենց նմաններուն զէմ, Պ. Չիթեան. եւ երբ ձեր ինքնակող պաշտօնը ունեցող մէկը այսօրինակ խոստովանութիւն մը կընէ եւ չա-

մաչեր, մեզ կը մնայ հաւատալ թէ ձեր գործածած զէնքը ոչ միայն կոշտ այլ եւ թուեալոր էր եւ մահացուցիչ, զոր գործածեցիք ձեր կրից յագուրդ մը տալու համար: Նոյն յօդուածի մէջ Պ. Չիթեան մի ուրիշ ստեղծակալ յայտնութիւն ալ կընէ զոր կրնամ տեսակ մը մատնութիւն անուանել: Պ. Չիթեան հայ եկեղեցին, ժամու պատարագը պաշտպանելու նպատակաւ՝ կողքայ թէ Հայրենիքի մէջ ժամն ու պատարագը քննադատող Բարկէնը ամենացած ոճիբի մը համար բանտերու մէջ կը հեծէ եղեր անցեալ տարի: Եւ այս անամօթ յայտարարութիւնը ընելով մեր պարունը կը կարծէ թէ յաղթանակ մը տարած է: Բարկէն ինձի անծանօթ մէկն է. իր ինչ ինչ գրածները ես ալ չեմ սիրած. բայց ժամի եւ պատարագի զէմ անոր գրածները հերքելու համար անոր բարոյականին զէմ ամբաստանութիւններ ընելը տղայամտութիւն է եւ ոճիբ: Պ. Չիթեան կրնայ ըլլալ թէ գիտէ Բարկէնը, բայց քանի որ այդ անձ ծածկանուան տակ գրած է, Չայնի այդ ձայնատուն բնաւ իրաւունք չունի զայն մատնել աշխարհի. յարգական աշխարհի մէջ սեւ մատնութիւն մըն է այս. եւ ցոյց կուտայ թէ Չիթեան ո՛ր աստիճանի յարմարութիւն ունի սորվեցնել ժողովրդին ինչ որ ինք չի գիտեր բնաւ, ժամն ու պատարագը պաշտպանելու իրաւունք չունի մէկը որ ուրացած է զայն. ժողովուրդին սորվեցնել յանդգնելու չէ այն որ սղէտ մըն է. ազգասիրութիւն թող չի քարոզեն անոնք որոնք ամենէն փոքր կէտերու մէջ անգամ չեն գիտեր զազանապահ ըլլալ: Պ. խմբագիրներ, նախ սորվեցէք եւ ապա ելէք ուրիշի դաս տալ: Նորէն կը տեսնուինք...  
 ՀԱՅՐ  
 ՊՈՒՐԿԱՉ, 28 Դեկտ.

պէտք կըզայ գործելու. եթէ մի առեւտրական մարդ կամ մի արհեստաւոր դադրի մի ամիս հրապարակի վրայ գործելէ, նեղութիւն կը քուչէ. եթէ մի բժիշկ կամ մի պաշտօնեայ, առժամանակեայ կերպով դադրի պաշտօնէն կը նեղուի.  
 Ուրեմն ինչպէ՞ս շնորհիւ եւ չը թշուառանայ բեռնակիր դասակարգը, որուն արհեստը իր կունակն է եւ առեւտուրը համետը, եւ այն ալ իսպառ դադրած է տարիներէ ի վեր: Թշուառութիւնը արդէն սկսած է իր անագորոյն մագիլները պարզել այդ թշուառ դասակարգի ամէն խաւերու մէջ, եւ խորտակել անոր կեանքը.  
 Մօտերս Մանուկ Դեղձանեան անուն վանեցի մի երկտասարկ թշուառութեան ճիրաններուն զոհ գնաց, որոյ յատկութիւնները մասնաւոր գովեստի արժանի էին. եւ դեռ շատեր ալ կը տանջուին մահուան անկողնոյն մէջ, որով, եթէ շուտով օգնութեան չը հասնուի, յիշեալին բաղկացից կը լինին: Եթէ այդ թշուառութեան պատճառը փրձատելու լինինք, դարձեալ մեր մէջը պիտի գտնենք: Ահա մի օրինակ զոր աւելորդ չեմ համարեր յարգելի ընթերցողներուն պատմել:  
 Կարմիր Սուլթանի սարսափներու ժամանակ, Կարնեցի Թովմասեան Մանուկը եւ իր եղբայրը բաղկի յաջողութեամբ մաղապուր կիլիան Ռուսմանոյ Բէօսութենէ քաղաքը եւ հոն մի հարուստ կալուածատէրի շնորհիւ քիչ ժամանակուայ մէջ, բաւական յառաջ կերթան. Ռուսմանական հայտտեաց քաղաքականութեանը շնորհիւ, մի շնչին պատրուակով յիշեալ անձը երկրէն արտրել կուզեն. անմիջապէս կը բանտարկեն, եւ դեռ

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**  
**ՄԱՏՆՈՒԹԵԱՆ**  
**ՍԸ ԶՈՒՆԵՐԸ**  
 (Իրախան կեանքի առնուած)  
 1896ի աշունն էր:  
 Տարուան այս եղանակը մահամերձի մը պէս կը տարածէր իր թեւերը բնութեան վրայ. ծառերը իրենց տերեւներով պարտէզներու գետիներ կը ծածկէին դեղինագոյն գորգի մը պէս. շարժուան մէջ քանի մը անգամ անձրեւէն թրջուած երկիրը կարծես կեանքէ հրաժեշտ տուող հիւանդի մը կերպարանքը առած էր: Անդին, ասոր բոլորովին հակառակ, թրքական կառավարութիւնը իր գազանային նպատակները իրագործելու համար, ամբողջ ոյժերը լարած էր: Եկեղեցեաց գաւառին կառավարիչը եւ չորրորդ քանակի ընդհանուր հրամանատար գազան Աէքի, բոլոր

ճարպիկութիւններն ամփոփած՝ Երզնկա քաղաքին պահակներու թիւը կրկնապատկած՝ ու հայոց թաղը խիստ հսկողութեան մը ենթարկած էին Ս... խմբագրուող գտնելու համար, որ, ճշմարիտ «Ֆէտայի» յարմար դիւցազնական քաջութիւններով ա՛ն ու սարսափ ձգած էր շրջակայ թուրք զիւղերուն մէջ:  
 Բնականաբար մատնիչներուն աղբին աս ճիւղերուն ալ նոր ասպարէզ մը բացուեցաւ. կառավարութեան հաւատարիմ հպատակներն ու գործակիցները դարձած էին, եւ ձեռքերնուս եկած բարի ծառայութիւնը՝ չէին զլանար: Շնորհիւ մատնիչներու, շարաթը քանի մը անգամ առնէր կը խուզարկուէին, անմեղներ կը բանտարկուէին: Բայց զարմանալին հոն է որ, մատնիչներն ալ իրարու ճարպիկութեան կամ յաջողութեան վրայ նախանձելով (°) իրար կը մատնէին...  
 Հայոց թաղին՝ Ս. Սարգիս եկեղեցւոյ քովի փողոցին մէջ, անպա-

ճոյճ ձեւով շինուած խեղճուկ միայրակ տուն մը կար: Ներս մանող մը խկոյն պիտի համոզուէր թէ՛ աղքատ ընտանիքի մը կը պատկանէր ան: Գիշեր ատեն, փողոցին վրայի դռան քով գտնուած աղբուրի մը ճոճուկը եւ գազանի եկող այցելուներու ոտքերուն խուլ ձայնը կը լսուէր դուրսէն: Խրճիթը ունէր պղտիկ շրջափակ մը, որուն մէկ հատիկ զարդն էր քանի մը տերեւաթափ ծառեր եւ մէկ երկու անձակ անուներու հետքեր: Շրջափակին աջ կողմը կը բացուէր տան դուռը:  
 Սենակը աղքատի մը անհրաժեշտ կարասիները միայն ունէր. պատին քով դուռը էր ձերմակ լաթով ծածկուած դրասեղան մը, վրան քանի մը պարապ եւ լեյուս դեղի շիշեր, զեղաթուղթեր, պղտիկ հայելի մը, աժանագին ժամացոյց մը, եւ յատակը ծածկուած էր պարսկական կիսամաշ գորգով մը: Անկիւններէն մէկուն մօտ դուռու կրակարանի մը վրայ ջուրով լեցուն սան մը կեռար անդադար, սենակին խորհրդաւոր լաութիւնը խանգարելով: Պատերը թէեւ ձերմակ ներկուած էին, սա-

կայն գորը գոյնը որոշ կերպով ցոյց կուտար երկար ատենէ ի վեր վերանորոգում չըլլալը: Երկու պղտիկ պատուհան միայն ունէր սենեակը, որոնք առջեւի շիջափակին վրայ կը նայէին, եւ որոնց ապակիներէն շատերուն տեղ թուղթ փակցուած էր: Դիտողը շատ պիտի գարմանար եթէ այս աղքատիկ սենեակին մէկ կողմը գեղեցիկ սաւաններով եւ վերմակներով զարդարուած մահճակալը տեսնէր, ուր պառկած էր գաղկղէմ, նիհար ու ծիւրած երիտասարդ մը՝ շրջապատուած անձնուէր գաշակցականիտու խուճէ մը՝ որ հիւանդին բանդագուշանքներէն, տքոքոցներէն ստիպեալ, տխուր լուռութեան կը պահէր... Ըսի թէ դիտող մը պիտի զարմանար այս փառաւոր մահճականը տեսնելով, որովհետեւ սենեակին միւս խեղճուկ կարասիներուն բոլորովին անհամապատասխան էր: Իրօք, հիւանդութեան սաստկութեանն առաջ եկած վէրքերը, շատ դառն վիճակի մը մատնած ըլլալով համակրելի հիւանդը, քաղաքին երիտասարդները այդ մահճակալը, ուրիշ տեղէ մը գազանի... բերած էին:

չաքորուած իր եղբայրը կը մեռնի ու ինքը եղբայրակարօս կը հեռացուի երկրէն զէպի Պուրկարին։ Թրքական հիւպատոսի հեռագրի պատճառով, Վառնայի նաւահանգիստէն ետ կը դարձուի Թուրքիա երթալու համար։ Նախ մէջ պատահամբ կը հանդիպի Կարապետ Արմազանեանին, զիստի գալիքը կը պատմէ անոր։ Կարապետ Արմազանեանը իր ցաւակցութիւնը կը յայտնէ, և իբրև մտերիմ ու ցաւակից բարեկամ, կը կեղծէ և կը խօստանայ Պուրկար հաներ Վերջապէս կելլեն Պուրկար և քանի մը օր ետք կառավարութեան գիտութեամբ Մանուկին փոխանորդ կը կարգուի Կարապետը Ռումանիայէն ապրանքները բերելու և ծախելու պայմանով։

Ապրանքները կը բերուին Պուրկարի և Կարապետի ձեռքով կը ծախուին։ Կանցնին ամիսներ, բայց խեղճ Մանուկը խնդրոյն անտեղեակ, կը սպասէ և մի սանթիմ իրեն չի վճարուիր։ Վերջապէս խնդիրը կը պարզուի և Կարապետի ընծին նայելով ապրանքը կը ծախուի 76 ու կէս գաղիական ոսկիի։ Խեղճ Մանուկը կը համոզուի, նորէն կանցնին ամիսներ և երբ դրամը կը պահանջուի, Կարապետը բոլորովին կուրանայ։ Մանուկը կտրիպուի կրկին դիմել, Կարապետը միանգամ ընդ միշտ ազատելու համար ոստիկանութեան կը յանձնէ և իր կնանքի ապահովութեան համար երաշխաւոր կը պահանջէ։ ատոյ չի բաւականանար, կուղէ Պուրկարիայէն ալ արքայի տալ, որպէսզի խեղճին ձայնը ալ իր ականջին չհասնի։ Հարցաքննութեան յետոյ, ոստիկանութիւնը կը համոզուի Մանուկի իրաւացի ըլլալուն և անպարտ կարճակէ։ Այդ անցքերէն յետոյ էր, որ

անձամբ ականատես եղայ վերջին ծայր թշուառութեան մատուած Մանուկին։ Աչքերէն արցունք կը հոսէր, ամբողջ օրեր անօթի կ'ունցընէր, շուարած էր բոլորովին։ Գրամ չունէր որ կառավարութեան բողոքէր, և տիրող անգործութեան պատճառով միջոց չունէր իր գոյութիւնը մի կերպ քարչ տալու։

Պարոն Ամիրխանեանցի ուշադրութիւնը կը հրաւիրեմք ներկայ խնդրոյն, որ իրեն ծանօթ է, և տեղս գտնուող բոլոր աւետարանականներու ուշադրութեանը կը յանձնենք խնդիրը։ Եղբայրութիւնը ուսումնասիրելով ու կարգադրելով մարդասիրական մեծ գործ մը կատարած կը լինին։ Թէ այդ դժբաղդը թշուառութեան գրկէն կը խլեն և թէ մի ամբողջ ընտանիք անգութ սովի ճիրաններէն կազատեն, Կը յոսանք որ, մեր տկար ձայնը արձագանք պիտի տայ տեղս գտնուող աւետարանականներու սրտին, և պիտի շնորհակալ խնդրոյն գոհացուցիչ վերջ մը տալ, որով ստիպուած չպիտի լինինք երկրորդ անգամ այդ անախորժ խնդիրը յուզելու։

Միսսիֆ Զարոյեան  
ՌԱԻՐԻՉ, 25 Ղևկս.

Կամայականութիւնի ու կրքից աւելի ինչ բացատրութիւն կարող ենք տալ, երբ նկատի ունենանք այն հանգամանքը՝ թէ 1897—98 տարեշրջանին 47,863 զուան դրամագլուխ ունեցող ընկերութիւնը Լիւաւայի ալլիանց դպրոցին յատկացում էր 6,100 զուան, մինչդեռ այժմ՝ 1898—99 տարեշրջանին 78,501 զուան է յատկացում, ինչ ենք ասում, «արժան է համարում»։ Սրբեօք պէտք չէ այստեղ կրկնել Պոլսեցիների մի հեզնական խօսքը՝ «ազգերն իս կը յառաջագրիմէ կոր»։

Քը՝ «ազգերն իս կը յառաջագրիմէ կոր»։

Գ. Ապօրինի չէ՞ր, հաշիւները վարչութեան կողմից ընտրված հոգաբարձական մասնագործի քննութեան ենթարկելը, քանի որ այդ իրաւունքը՝ իբրև համարատու մարմին՝ ընդհանուր ժողովին էր պատկանում։ Եւ ինչ տեսակ քննութիւն... Գննիչ մասնագործը արգեօք կարող էր «մի ժամայ» միջոցում ամբողջ մի տարուայ հաշիւը ճշդութեամբ քննել և կատարված զեղծումներին վերահասու լինել։ անշուշտ ոչ։ Եւ արդէն քննիչ մասնագործը իր արձանագրութեան մէջ բնաւ չէ նշանակում հաշիւների «ճշգրտութիւնը», այլ միմիայն արձանագրում է մի ժամայ մէջ տեսածը, այսինքն «ամէն հաշիւներն «կանոնաւորութեամբ» պահված և «ելուսուտքը» մանրամասն կերպով տետրների մէջ արձանագրված» լինելը, սակայն այս խօսքերը չեն նշանակում թէ հաշիւները «ճշգրտէին», թէ «զեղծումներ չկային»։ Հաշիւները կանոնաւորութեամբ պահված և ելուսուտքը մանրամասն արձանագրված գործողութիւնների մէջ կարող են զեղծումներ պատահիլ։ այո, կարելի է աննպատակ կերպով մի փոքր վատնել և կամ նոյն իսկ գողանալ և այդ փոքր արձանագրել «այլեւայլերի» մէջ, ինչպէս որ նոյն բանը տեսնում ենք ընկերութեան վերջին տեղեկագրի մէջ, այսպէս նշանակված «քարտուղարի, ծառայի ու ճիկ և այլն... 3967 զուան» — թէ այս գումարից հանենք քարտուղարի (1000) և ծառայի (360) ուճիկները 1360 զուան «այլերի» դէմ մնում է՝ 2607 զուան, որը ինչ բանի ծախսված լինելը յայտնի չէ։ Եթէ այդ գումարը

2607 զուանը (մոտաւորապէս 1306 ֆրանք է անում) մի շնչին գումար լինէր, անշուշտ ուշադրութիւն չէր գրաւելու։ սակայն որտեղ է տեսնված, որ մի հասարակական գործի հաշուետուութեան մէջ «այլերի» առաջ նշանակվի 1306 ֆրանք, առանց մանրամասնութիւնը յայտնի լինելու։

Ե. Ապօրինի չէ՞ր վարչութեան 10—12 նիստերը երկար ժամանակ անցնելուց յետոյ մի անգամից արձանագրել և ստորագրել տալ անդամներին, քարտուղարի 1000 զուան ուճիկ տալով հանդերձ։ Այդ ուճիկը այս տարի 1500 զուանի բարձրացնելու պայմանով, մինչդեռ զպրոցի յատկացված գումարի զեղծուիլը քիչ վերել տեսանք։

Զ. Ապօրինի գործ չէ՞ր մանկապարտէզը փակելը...

Է. Ապօրինի չէ՞ր մանկապարտէզի վարժուհու առանց պատճառի հեռացումը, որ արդէն նկարագրված է «Շարժում»ի 144 թւի մէջ։

Ը. Ապօրինի չէ՞ր կարևոր և ձեւէ արհեստանոցի ներկայ վարժուհու անցեալ տարի հեռացումը և այս տարի վարձուիլը։ տես «Շարժում» թիւ 178։

Թ. Վարչութեան երկու անգամները (մի գանձապահ) արգեօք վարչութեան նախագահին ապօրինի գործերի դէմ բողոքելով չը հրաժարվեցան։

Ժ. Ընկերութեան 28 անգամները (մեծամասնութիւնը) մի թէ՛ չը բողոքեցին առաջնորդի, վարչութեան կատարած ապօրինի գործերի դէմ։

Ընկերութեան 28 անդամների միայն այս բողոքագիրը բաւական է ապացուցանելու վարչութեան ապօրինի գործերը։ Այս անհերքելի փաստը գոյութիւն ունենալուց յետոյ, բաւական ա-

նր հիւանդը աւելի հանգիստ կը գտնէք եւ օրէ օր ապաքինման յոյս կար։

Հիւանդին ներկայութիւնը այս աղքատ տնակը կատարեալ տիրութեան մատնած էր։ Յորեկ ու զիւր կայցելէին հոն երիտասարդներ, երկու երեք անձնուէր օրիորդներ և քաղաքին հաւատարիմ հայ բժիշկներէն մէկը։

Ուրիշ մարդ տեղեկութիւն չունէր այս ամենէն...

Նկարագրուած աղքատիկ տան գիւմաց կը բարձրանար փառաւոր երկյարկ տուն մը, որ իր ներքին և արտաքին զարդերով կատարեալ հակապատկերէն էր առաջինին։

Այս տան վերի յարկը — ուրկէ կարելի է լաւ մը գիտել ինչ որ կանցնի կը դառնայ զրացի աղքատ տան մէջ՝ կը բնակէր զեղազոր բժիշկ մը, որ, քաղաքին զարգացած երիտասարդութեան համակրութիւնը չհամ չըլլալուն... երկար ատենէ

ի վեր հիւանդը դարմանող բժիշկին սխերիմ հակառակորդը դարձած էր։ Քանի քանի անգամներ իր պաշտօնակիցը մատնելով բանտարկել տալու փորձեր ըրած էր բայց իր նողկալի, ստոր ձեռնարկին մէջ չէր յաջողած։

Հիմա յարմար առիթը ինքնին կը ներկայանար. լաւ գաս մը կրնար տալ իր մրցակցին...

Քանի մը օրերէ ի վեր բժիշկին և կասկածելի... երիտասարդներու գաղտնի այցելութիւնները զեղազոր բժիշկին ուշադրութիւնը գրաւած էին. հոստառութիւնը սրեց որսկան բարակի մը պէս. իրեն քանի մը արքանակ ալ գտաւ ու այս հանգոյցը քակելու աշխատեցաւ։ Տարակոյ չիկար, իր զրացիին տանը մէջ կասկածելի բան մը կը գտնար...

- Ինչպէս պէտք է լաւ մը ստուգել, հարցուց անհանգստութեամբ զեղազոր — բժիշկը իր արքանակներուն։
- Շատ դիւրին գործ է։
- Ինչպէս։
- Տանիքը ելնելով զգուշութեամբ

լուսամուտէն նայելը երկու վայրկեանի գործ է։

— Բայց սենեակը տանիքէն լուսամուտ չունի, անպատճառ այս գաղտնի գործողութիւնները սենեակին մէջ կատարուելու են, աւելցուց զրացի Գ... Ը։

— Իրաւունք ունիք, ըսաւ երրորդ մը։

— Ինչու կը մտածէք, այդ գործը ինծի ձեռքէք, մէջ մտաւ թաղեցի Կ... որ, ուշադրութեամբ մինչեւ այն վայրկեան մտիկ կընէր, և որ կը կարծէր թէ ինք երիտասարդութիւնէն իբր կասկածելի մէկը ճանչցուած չէ։

Այս ըսելով Կ... անապարանքով դուրս ելաւ ու քայլերը ուղղեց դէպի կասկածելի տան գուռը։ Սենեակը գտնուողները այս նորեկ-ծաղիկին... անակնկալ ներկայութիւնը տեսնելուն պէս զարմացան՝ ամենայն պարագայում թուով փութացին անջուր կտրել, ու լրտեսին անտեղի հարցումին պատասխանը տալով ճամբեցին։

Բայց լրտես Կ... ք երիտասարդներով զրաղած միջոցին պատահա-

նէն ազօտ կերպով նմարած էր — առանց անջնարու սակայն — հիւանդը։ Իր խելքով... ամէն բան հասկցաւ այլեւս (° ° °)։

— Յաղթութիւն, գոչեց Կ... իր ընկերներուն սենեակը վերադառնալով, գազանական ուրախութեամբ լցուած. աչքովս տեսայ լաւ մը, բնաւ կասկածելու հարկ չի կայ — խմբապետ Ա... ն է, մահճակալի մը մէջ հիւանդ պառկած...։

Անանային գիշեր մը՝ սաստիկ հով կը փչէր, լուսինը և աստղերը՝ երկնքի այս կանթեղները քողարկուած էին թուխ ամպերու ներքեւ որոնք կամաց կամաց իրարու վրայ կուտակուելով երկիրը աւելի կը խաւարեցնէին։ Այս ամբողջութեան աղետալի ներդաշնակութիւնը մէկը չէր խանգարէր։ Սեւաթոյր երկինք մը կը սարածուէր ամբողջ քաղաքին վրայ սուգի զգեստներու պէս։ Աքաղաղներու երգերը կը ծանուցանէին առաւօտեան մերձեկնալը։

մուր երես պէտք է, որ մէկը համարձակի հերքել (.) մինչև ցարդ զանազան հայ թերթերում գրվածները, մասնաւորապէս «Մշակ»ի, «Շարժում»ի և «Սուրհանդակ»ի մէջ գրված քննադատութիւնները:

Մ Ի Ր Զ Ա

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սամաթիոյ հայ ձկնորսները իրենց ունեցածէն բաժին կը հանեն չքաւորներու և կարօտներու համար: Նաւակատիքի առիթով ազգային հիւանդանոցի պատասխարեալներու սեղանի համար բաւական քանակութեամբ ձուկ նուիրելու են:

Արդեօք, Վառնայի, Ռուսչուքի, Ֆիլիպպի և Պուրկազի ունեւոր հայերը, բան մը տալին իրենց կարօտ եղբայրներուն: Արդեօք մտածեցին թէ մեծ թուով հայ բեռնակիրներ Պուրկազի մէջ անօթի են և վաղուց օգնութեան կարօտ:

— Թիֆլիզի շրջանի մէջ գըտնուած Սիւլքալաքի երկրաշարժէն փնտրուածներու համար քսան հազար ռուպլի Թիֆլիզի մէջ ժողովուրդ է, քսան հազար ալ մէկ քանի օրուան մէջ Բաքու: Նուիրատուները մեծ մասամբ հայեր են, ինչպէս և երկրաշարժէն փնտրուածներու մեծամասնութիւնը:

— Պոլսոյ իւաներէն միոյն մէջ յիսուս տարեկան տարի մը սպաններ է ակնցի պատանի մը և անոր հայրը, որովհետեւ տղան մերժեր է այդ գաղան ծերունիին աղաթոտ առաջարկը կատարել:

— Վառնայի ազգային երկսեռ վարժարաններու համար վարձքով ուսուցիչ հրաւիրուած են Պ. Հայկ Փէշտիմալճեան և Միքայէլեան. նախկին դասա-

տուներէն մնացած են տնօրէնը Պ. Պօնճուգեան, Պ. Միսաք Մարգարեան և բոլոր վարժուհիները: Տօքթ. Աթաբէկեանց ուսուցական ժողովի համաձայնութեամբ սկսաւ դրամ հաւաքել ուսումնարանի մէջ բնագիտական փորձեր ընելու համար պարզ գործիքներ և մանկապարտէզի համար անհրաժեշտ նկարներ գնելու:

Հանգանակութիւնը շատ յաջող է. երկու օրուան մէջ հարկը ֆրանք հաւաքուած է, դեռ յոյս կայ որ աւելի շատ հաւաքուի. հանգանակութիւնը վերջանալէ յետոյ, ցանկը պիտի հրատարակուի:

Ներկայ ուսուցչական խումբը մտադիր է և մանկական գրադարան մը հիմնել զպրոցիւնի մէջ աշակերտներուն համար, որովհետեւ մանուկների համար ալ իրենց դարգացմանը յարմար գրքերու ընթերցումը անհրաժեշտ է:

— Պատրիարքարանէն կիմացուի թէ, ներքին գործոց նախարարութիւնը հեռագրեր է վանայ, Խարբերթի, Պիթլիզի և Տիարպէքի իր կուսակալութիւններուն, որպէս զի երաշտութեան պատճառով արմտիքի սպիթիւնը դարմանելու համար սերմնացանի և ուտելիքի ցորեն բաշխուի տեղացիներուն:

— Ս. կաթողիկոսը Պատրիարքին և Վանայ Ներսէս եպիսկոպոսին նամակով հաղորդեր է թէ՛ Երեւանի շրջակայքը և Էջմիածին բաւական թուով կարօտեալներ կը գտնուին, որոնք իրենց օրական ապրուստը Մայր Աթոռէն կտանան. ասկից զատ կողկասի մէջ տիրող թանկութիւնը և աղէտները կարգիլին իրեն Վանի կարօտեալներուն նպաստել, ինչպէս պահանջուած էր իրմէ:

—)(—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագիրները կը հաղորդեն թէ, անգլիական գործերը նորէն անյաջող կերթան. զօրավար Պիւլլէրի ժէներալներէն մին կրկին պարտուեր է մեծ կորուստներ տալով: Պիւլլէրի մեծ գժուարութեամբ Թիւրքիա զետէն անցնիլը անօգոտ պիտի ըլլայ:

Մէկ խօսքով առայժմ Պօքրնէրը կը դիմադրեն և կը կռուին ամենայն աջալրջութեամբ, և հմուտ ռազմական շարժումներ կընեն: Անգլիան ասանկ դիմադրութեան գուցէ դեռ հանդիպած չըլլայ: Եթէ վերջ ի վերջոյ ալ յաղթէ, իսկապէս այդ յաղթութիւնը իրեն շատ սուղի նստած պիտի ըլլայ:

Անգլիացոց նոյնիսկ ուշ յաղթանակը, ըստ երեւոյթին, բոլորովին կասկածելի կը դառնայ: — Թօքայի մէջ Անգլո-Եգիպտական զօրքերու վաշտ մը ձերբակալած է հեռակաւոր մահդիւսական ապստամբ Օսման Տիկման: Ձերբակալեալը պիտի տարուի Սուաքիմ:

— Թրանսիլիւի Եւրոպիոյ ներկայացուցիչ Պ. Լէյսա Պրիւքսէլի թերթերու մէջ յայտարարած է թէ ինքը իր կառավարութեան կողմէ արտօնուած չէ կամաւորներ հաւաքել: Եւ կաւելցնէ թէ, ով որ կուզէ մտնել թրանսիլիւիներու բանակին մէջ, պէտք է իրին սեփական ծախքովը հոն երթայ:

— Թուրքերը 1892 թուականին ապստամբ կրետացիներ ձերբակալած էին, որոնք յաւիտենական շղթայակապ բանտարկութեան դատապարտուելով զրկուած էին Բիտուլիոյ բանտը:

Բանի մը շարժ առաջ այդ կրետացիները, պուլկարի մը օգ-

իսկ անձնուէր եւ արի օրիորդներ— որոնք ուրիշ վրայ վստահութիւն չուենալով հիւանդապահի պատօնը իրենք ստանձնած էին՝ չի ճանչցուելու համար երեսներն ծածկած, նախատինքներու, անէժքի տարաքի մը կը լինէին այն ուրուականներուն զլիւռը՝ որ իրենց սիրելի հիւանդը յափշտակեցին անողորմաբար:

Հետեւեալ առտուն, ամբողջ քաղաքը տարածուած էր զիշերուան անցքը: Թուրք յիմար ամբոխին բերնէն կը լսուէր «Քիսայի Ռ... ի փաշա նար-վըշլար» (օ.օ.օ) խօսքին յեղիղումը եւ անասնային, դեւական ժպիտ մը երեսներն վրայ կերեւար:

Նոյն օրը նաեւ կառավարութեան պաշտօնատուներ մեծ... հոռուեղում կը տիրէր: Եւրոք մը հայ-թուրքեր կանչուած էին, որոնք կը ճանչնային Բեռնի, վկայելու համար: Կառավարական զլխաւոր պաշտօնեաները եւ քաղաքի կառավարիչը ճիգեր կը լիտիւնէին զայն իբր Բեռնի հաւատացնելու... սակայն կաշառք, սպառնալիք անօգուտ եղան, Դիտող թուրքերն ալ վկայեցին թէ խմբագրու-

նութեամբ կրցեր են բանտի պատը ծակել, ոտքերուն շղթաները խորտակել և փախչիլ:

Քսան օր ճամբորդելով վերջապէս կրցեր են ոտքերնին դնել ազատ Յունաստանի հողի վրայ և հիմակ Աթէնք կը գտնուին:

Թիւրքիոյ «ՍուրբԱլ»

Վաղը (հինգշաբթի գիշեր) ի նպատ «Վէսէլօ» խմբին դերակատարներէն Պ. Լեոն Շաքարեանի:

«Խաղացողի մը կենաց 30 տարին» թատերգութիւն 6 արար: Խիստ ծիծաղաշարժ զաւելչումը:

Մեծ խնամքով պատրաստուած սոյն բարոյալից թատերախաղը իրաւամբ արժանի է թատերասիրաց ուշադրութեանը: Կը յուսանք թէ, թատերասէր հասարակութիւնը իր արդիւնաբեր ներկայութեամբը պիտի քաջալերէ նպատաստորեալը, որ բաւական ժամանակէ ի վեր հայ թատերաբեմին վրայ գտնուելով, գնահատման արժանացած է:

Գ.Ս.Ե.Չ.Ս.Ս.ՈՒՆ ՍԱՆԹՐԱԼ

Մուսալլաի Թաղապետական պատեհիկի նիւսաց, Ասիական Անկի, Սիւլվօֆը

Պատիւ ունիմ ծանուցանելու Արգոյ հասարակութեան թէ՛ այս անգամ մեծ աւ պատրաստութեամբ բացած եմ սոյն գարն շրատունը, յուսով եմ թէ չը պիտի վլանայ պատուարժան հասարակութիւնը զիս քաջալերել:

Ученствда „Взаимность“ Варна:

Ամէն բան, վերջապէս, այնքան ներդաշնակօրէն համապատասխան էին այն զիշերուան մէջ մարդ-զագաններու ձեռքով կատարուելիք ամենաքստմնելի և աղելաբը դէպքին, որ կրնար կարծուիլ թէ համայն բնութիւնէ զուշակած էր կատարուելիք օճերը եւ նախապէս ամէն բան սուգի մէջ գրած էր:

Այս պահուն, հարիւր տար օտքերու դիտառքը, նիզակներու շառաչիւնը, ցած խօսակցութիւններու շրջակայքը լուսութիւնը կը խանգարէին ու ամբողջ հայոց թագը ան ու գոգի մէջ կը թողէին: Եթէ ան պահուն լուսինը եւ աստղերը քուլարկուած՝ եւ տուններու ճրագներն ալ մարած չըլլային, բոլոր փողոցները սուրբներու, թուրքերու ցուլումէն արտափայլուող ճառագայթներով պիտի լուսաւորուէր եւ հեւազնեաէ վաշտերու վիտուսը որոշ կերպով պիտի տեսնուէր, որոնց մէջ նաեւ ուրուականի պէս, մասնիչ հայ-թուրքերէն ալ մէկ երկու հոգի:

Հինգ վայրկեան վերջ թաղին անկիւնները, ծակերը, սանիքները վեցհարիւր զօրքով պաշարուած էր:

«Ճէտայիտի դիմադրող ուժին երկիւղը»—որուն քանի մը անգամ հանդիպելու զժողովութիւնը ունեցած էին—ստիպած էր կառավարութիւնը ասանկ իրօնն բազմութիւններով գալ, իբր թէ անգլին բանակի մը գէմ ելած ըլլային: Ու անա՛ անգոթ զօրակցաներ, առանց երբեք սխալելու, ուղղակի մեր յիշած խեղճ անակին դուռը կը բաղխէին խորտակելու աստիճան, ուր հրեշտակ մը դառն ցաւերով կը շարժուէր ու կը աքաղար: Վերջապէս գուռը խորտակելով տասնեակներով զագաններ ներս լցուեցան, եւ արիւնաշաղախ, կոշտ, վայրագ ձեռքեր, այդ փափուկ էակը անդթաբար հաստ, անշահ ջուլալի... մէջ գնելով՝ զօրքի մը կրօնակը զհանգեցին, հազար ու մէկ զզուելի հայտնայնքներ անոր վրայ թափելով... այն էակին զոր իր ընկերները չէին ուզեր առանց մահ-ճակալի պառկեցնել եւ որուն քով չէին խաւեր իսկ զայն անհանգիւտ չընելու համար:

Չգուշութիւնն ու հեռատեսութիւնը ստիպեց հոն գտնուող երիտասարդներուն խոյս տալ կամ պահուելով:

Ռ...ն ըլլալը հաստատող ո՛չ մկ նշան չկայ հիւանդին վրայ: Ձէքի ալ անձամբ զիտեց հիւանդը եւ նոյն բանը հաստատեց:

Չորրորդ բանակի բոլոր զինուորական բժիշկները աշխատեցան հիւանդը դարմանել, եւ անկից ստուգել ամէն բան:

— Ուրիշ բան չի կրցան իմանալ: «հիւանդը բնիկ Տ... նաւահանգիստէն էր, եւ անցագիր ալ ուէ՛ր: Ամէն յոյս պարապը ելաւ... Բեռնի ան միջոցին Տ... քրդարնակ գաւառը գագած էր արդէն...»

Մասնիչները թէեւ մասամբ իրենց նպատակին հասան, այսինքն հիւանդը նայող բժիշկը պաշտօնէ գաղ-րեցու, քանի մը երիտասարդներ, հիւանդը եւ տանտիրոջ մէկ հատիկ սղան բանտարկեցան, եւ թերեւս մինչեւ հիմա ալ կը մնան... բայց հայ յեղափոխականներու ան ուսպանալիքը... ժողովրդին նախատինքները վրանուն անպակաս եղաւ ու պիտի ըլլայ...:

ԲԱԶԷ

Ֆիլիպպէ —)(—